որոշում կայացնելու փաստական հիմքը՝ հստակ թե Հայցվորը ինչ պարտավորություն է ունեցել գնման գործընթացքում, որը և չի կատարել:

Հետևաբար հայցը հիմնավոր և բավարարման ենթակա:

6. Դատական ծախսերի հարցը

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 10-րդ կետերի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները, դատարանի կողմից գործի քննության համար անհրաժեշտ ճանաչված այլ ծախսերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանը, հիմք ընդունելով, որ հայցը ենթակա է բավարարման, սակայն դատական ծախսի գանձման պահանջ առկա չէ, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածը, 108-րդ հոդվածի 1-ին մասը, դատական ծասխերի հարցը համարում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 189-րդ, 192-րդ, 194-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

Հայցը բավարարել՝

1. Անվավեր ճանաչել «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ «Զայնա Մոլլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/18» ծածկագրով գնման գործընթացի արդյունքում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**